ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-7-Ը ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
Թուրքմենստան (Աշխաբադ), 2019թ. սեպտեմբերի 5-7-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
Հանդիպումը կայացել է Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի միջև ձեռք բերված համաձայնության շրջանակներում

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
Զ.Մնացականյանի և Թուրքմենստանի արտաքին գործերի նախարար, առաջին փոխվարչապետ Ռ.Մերեդովի միջև ձեռք բերված համաձայնության շրջանակներում երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու համար պարբերաբար կայանում են հանդիպումներ հայ և թուրքմեն գործընկերների միջև:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
Հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի Հանրապետություն գազի՝ Իրանի տարածքով ներմուծման հնարավորությունները թուրքմենական կողմից SWOP գործարքի միջոցով:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
Հանդիպումներ են տեղի ունեցել «Թուրքմենգազի» ղեկավարության հետ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման ընթացքում որոշում կայացվեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը պաշտոնական գրությամբ դիմի «Թուրքմենգազին»՝ նշելով գազի գնման հայկական կողմի պայմանները:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Թուրքմենական կողմը իր պատրաստակամությունն է հայտնել Հայաստանին գազ վաճառել ռուսական գազին մրցունակ գնով:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

11 սեպտեմբերի 2019թ.